ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏՀՏ- ի կիրառումը տարրական դպրոցում որպես բարձր ներգրավվածությունը ապահովելու միջոց դասավանդման գործընթացում

ՀԵՂԻՆԱԿ՝ Նաիրա Կիրակոսյան

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Սիսիանի հ. 5 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գրական ակնարկ----------6

Գլուխ 1---------- 7

Փորձարարական դասի պլան 1----------11

Փորձարարական դասի պլան 2----------14

Փորձարարական դասի պլան 3----------16

Տվյալների մշակում և վերլուծություն----------20

Փորձարարական դասերի անդրադարձ----------22

Եզրակացություն----------22

Առաջարկություն----------23

Գրականության ցանկ----------23



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որևէ բան ուսումնասիրելու լավագույն ձևը այն ինքնուրույն հայտնաբերելն է: / Դ.Պոյա /

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում:Իմ կարծիքով անհնար է հասնել այդ նպատակներին՝ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության: Տեղեկատվական տեխնոլոգիաներն այսօր դարձել են կրթական գործընթացի գործիք ինչպես սովորողի, այնպես էլ դասավանդողի համար: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործ կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր:

Այսօր մեր կրթահամակարգում ամենախիստ ձևով կարևորվում եմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում: Կրթության հիմնական հեռանկարային նպատակը մեր ապագա սերնդին կյանքի և գործունեության համար նախապատրաստելն է:Կրթական համակարգը կոչված է ձևավորելու այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործել ու զարգացնել հասարակությունը: Համացանցի օգտագործումը զգալիորեն բարձրացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման ու յուրացման արդյունավետությունը:

Ըստ իս ուսուցիչը պիտի հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե իր՝ ուսուցչի գործը և թե աշակերտների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը: Բացի դա՝ անհրաժեշտ են համապատասխան պաշարներ և դրանք կիրառելու հմտություններ:

ՏՀՏ-ները ուսուցչի համար անփոխարինելի են որպես գիտելիքների աղբյուր և գործիք, որոնցով կարելի է կառուցել դասը: Դասապրոցեսում ՏՀՏ-ներն ակտիվորեն օգտագործելու

համար ուսուցիչը պետք է հմտորեն տիրապետի դրանց: Պետք է օգտագործի դրանց առավելությունները դասապրոցեսում, ներմուծելով ժամանակակից դասավանդման մեթոդներ ու հնարներ: Դասերին անհրաժեշտություն է ՏՀՏ-ների կիրառումը, որով հեշտանում է նյութի յուրացման ընթացքը, դասը դառնում է տպավորիչ, մեծանում է դիտողականության մակարդակը, մեծանում է հետաքրքրությունն առարկայի նկատմամբ, տնտեսվում է ժամանակը: Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը կարևոր դեր ունի դասապրոցեսում:

Ժամանակակից աշակերտը ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Հանրակրթական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի:Այստեղ օգնության են գալիս համակարգիչը, համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝համակարգչային ուսուցում:Հետևաբար ուսուցիչը պետ է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին,այսինքն՝լինի մեդիագրագետ: Փոխադարձ դասալսումների արդյունքում համոզվեցի,որ նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ,մատչելի և գրավիչ է դարձնում նյութը,իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է

• բարձրացնել սովորելու մոտիվացիան

• մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

• նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը

• բարելավել դասի անցկացման մեթոդները

• ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները

• պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը

• օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց

•արագ և որակյալ պատրաստվել դասին,

• մեծացնել սովորողների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

• նպաստել նրանց ներգրավվածությանը դասին և անտարբերության վերացմանը:

- Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրազեկություն
- Զարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտություններ
- Խթանել միտքը
- Սովորողին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ

Վերոնշյալ նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

Նպատակներին հասնելու համար աշխատանքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

. գնահատել տեխնոլոգիաների կիրառելիության մակարդակը ժամանակակից ուսուցման գործընթացում:

. աշակերտների մեջ ձևավորել նորարարական և ավանդական մանկավարժական համակարգերի վերլուծության կարողության զարգացում:

. ծանոթանալ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններին կրթական գործընթացում:

Թեմայի արդիականություն

Իմ դիտարկմամբ ժամանակակից աշխարհը զարգանում է շատ արագ ,ինչը անդրադառնում է նաև կրթական գործընթացի վրա։Նախկին ավանդական դաս-դասարանային մեթոդները ինչ որ չափով արդեն հնացած են և աշակերտին արդեն քիչ են հետաքրքրում։Անհրաժեշտ են նոր լուծումներ և նոր մոտեցումներ մոտիվացիայի բարձրացման համար։Թվային և մեդիա-կարողունակության բարձրացումը նաև ՀՊՉ-ի կարևոր սկզբունքներից մեկն է ,ուստի ուսուցչի աշխատանքը պետք է անպայմանորեն միտված լինի դրան։

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՏՀՏ-Ի ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Համոզված եմ,որ ՏՀՏ-ի օգտագործումը թույլ կտա ակտիվացնել սովորողների գործունեությունը, հնարավորություն կտա բարելավել երեխաների կրթության որակը, բարելավել ուսուցչի մասնագիտական մակարդակը, դիվերսիֆիկացնելու ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների միջանձնային հաղորդակցության ձևերը: Ըստ իս ժամանակակից կրթության մեջ օգտագործվող ՏՀՏ գործիքները հնարավորություն են տալիս բարձր արդյունքների հասնել ուսման ընթացքում: Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ապահովել ուսուցչի և սովորողի փոխազդեցությունը բաց և հեռավար ուսուցման համակարգում:

Համակարգչի իմացության անհրաժեշտությունը, նրա բարդությունը և վերացականությունը թելադրում են դասավանդման հմտություններ: Այստեղ հավասարապես կարևոր են դասավանդողի ոչ միայն գիտելիքները, բազմաթիվ մեթոդների իմացությունն ու դրանց ճիշտ օգտագործումը, այլ նաև դասապրոցեսում ժամանակակից օգտագործումը: Յուրաքանչյուր առարկայի դասավանդման ժամանակ ՏՀՏ միջոցների կիրառումն անհրաժեշտություն է դառնում: Ուսուցանելու մեջ տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը, այլ բաների հետ մեկտեղ, ուսուցիչներից և աշակերտներից պահանջում է դրական վերաբերմունք և՛ առարկայի, և ՛նոր տեխնոլոգիաների նկատմամբ, ինչպես նաև անհատական կարողություն:Կարծում եմ,որ ՏՀՏ-ների կիրառումը կարևոր դեր ունի դասապրոցեսում: Նկատել ե՞ք արդյոք, թե որքան է հեշտացնում ուսուցչի աշխատանքը, երբ դասապրոցեսը հագեցված է ՏՀՏ-ներով:Այսօր շատ են խոսում ինտեգրված դասերի , դրանց արդյունավետության մասին:

ԳԼՈՒԽ 1.

Տարրական դասարաններում ՏՀՏ գործիքների կիրառման առանձնահատկությունները

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները գնալով ավելի են զարգանում և տեղ գտնում յուրաքանչյուրիս կյանքում։Կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը։Կրթության բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվում է ուսումնաճանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը։Մարդու ձևավորումն ու գաղափարապես զարգացումը սկսվում է հենց դպրոցից։Ներկայիս պայմաններում բացի կրթական մակարդակը շատ կարևոր է, որ մարդը լինի մեդիագրագետ, կարողանա օգտվել ՏՀՏ

գործիքներից և ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ավանդական ուսուցիչ-աշակերտ-դասագիրք սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Իմ կարծիքով տարրական դպրոցի տեղեկացվածությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար:

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը: ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում աշակերտին լայն հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: ՏՀՏ-ի կիրառումը տարրական դպրոցում հանգեցնում է բացատրողական-նկարագրող մատուցման փոխարինմանը՝ կիրառականով: Աշակերտը դառնում է ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցը, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական և խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը,նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի մատչելի և գրավիչ է դարձնում նյութը,իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: ՏՀՏ-ն տալիս է հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ հասանելի մնալ, ստեղծել և կիրառել նոր նյութեր: Համակարգչային թեստերի արդյունքում կկարողանամ արագ գնահատել աշակերտի կողմից ստեղծված նյութերը: Սա հնարավորություն է տալիս առավել պարզորոշ տեսնել յուրացման արդյունքը յուրաքանչյուր աշակերտի,առարկայի, դասարանի կտրվածքով և պատկերացում կազմել կրթական որակի մասին, հնարավորություն է ընձեռնվում ուսուցումը դարձնել մատչելի և հասանելի ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների համար: ՏՀՏ-ննպաստում է նյութի յուրացմանը,ամրապնդելու գործընթացին,աշակերտին ներգրավում ուսուցանվող նյութի մեջ,խթանում ստեղծագործական մտքի դրսևորումը: Ուսուցիչն իր գործունեության ընթացքում դառնում է սովորողի գործընկերը:

Նախքան աշակերտներին ծանոթացնելը ՏՀՏ գործիքների առանձնահատկություններին, ուսուցիչն ինքը պետք է ուսումնասիրի դրանք, հավաքագրի տեղեկատվություն և նաև

գործնականում կարողանա կիրառել դրանք։Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝լինի մեդիագրագետ: Տարրական դպրոցի ուսուցչի առջև ծառացած հիմնական խնդիրներից է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, խորացնել գիտելիքները շրջապատող աշխարհի մասին, բարձրացնել երեխաների մտավոր գործունեությունը և զարգացնել խոսքը։

Համակարգչային տեխնոլոգիաները հասանելիություն են ապահովում տեղեկատվության տարբեր աղբյուրներին, բարձրացնում են աշակերտների ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը, լայն հնարավորություն են տալիս սովորողների և մանկավարժի գործունեության համար՝ կյանքի կոչելու դասավանդման նոր մեթոդներ և միջոցներ 3։

http://zangak.am/pdf/Mank.mitq/2016/Mankavarzhakan-Mitq-2016-3-4.pdf

Տեղեկատվական միջոցների ճիշտ ընտրությունը և օգտագործումը տարրական դասարաններում մանկավարժական կարևորագույն խնդիր է: ՏՀՏ-ների կիրառումը տարրական դասարաններում ուսուցչից պահանջում է դասին նախապատրաստական մեծ ջանքեր և ժամանակ, քանի որ ամենօրյա դասը պլանավորելիս անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի սցենարը, նախագծել գործողությունների հերթականությունը և դրանք ճիշտ ձևով մատուցել աշակերտներին։Այս ամենի արդյունավետ իրականացման համար կարևորվում է ուսուցչի մեդիագրագիտությունը, դասավանդվող նյութի լիարժեք իմացությունը: ՏՀՏ գործքիներն օգտագործելիս շատ կարևոր է նաև դրանց արդյունավետ և տեղին կիրառումը։Աշակերտներին տեսասահիկների միջոցով կարելի է բացատրել օրվա դասը, իհարկե դա ուսուցչից հավելյալ աշխատանք կպահանջի, բայց դասն ավելի հետաքրքիր ու բովանդակալից կդարձնի։

Համակարգիչներից օգտվելը նաև կզարգացնի աշակերտների տեսողական հիշողությունը և ավելի պատկերավոր կդարձնի ուսուցանվող նյութը։Այստեղ աշակերտներին հնարավորություն է տրվում նաև ինքնադրսևորվել, դասին առնչվող որոշ նյութեր փնտրել և ուսուցչի օգնությամբ անցկացնել դասը: ՏՀՏ գործիքներն օր օրի ավելի բազմազան են դառնում: Ինֆորմացիոն հոսքի մեջ պետք է կարողանալ ճիշտ տեղեկատվությունը ընտրել և ժամանակին համընթաց քայլել։Ուսուցիչը պետք է

պատրաստ լինի անընդհատ գիտելիքները հարստացնելու, յուրացնելու այն մեթոդները, որոնք կիրառելի և արդյունավետ կլինեն տարրական դասարաններում աշակերտների հետ աշխատելիս, մեծ պատասխանատվությամբ մտնի տվյալ դասարան և անի առավելագույնն աշակերտներին կրթված և արժանապատիվ քաղաքացիներ դաստիարակելու հարցում։Աշակերտներն էլ իրենց հերթին պետք է հետևեն այն հրահանգներին, որոնք կտա իրենց ուսուցիչը, օգտվեն այն հնարավորությունից, որ դեռ փոքր հասակից արդեն կարող են տիրապետել շատ ու շատ գործիքների,որոնք իրենց ողջ կյանքում կարող են դառնալ լավ ապագայի և հաջողակ մարդ լինելու գրավականը։Ի վերջո կարող ենք փաստել, որ ՏՀՏ գործիքների կիրառումն ուսումնական գործընթացում չափազանց կարևոր է և ներկայումս այն ավանդական մեթոդի հետ համընթաց գնում է առաջ։Պետք է փաստել, որ կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունը, իսկ այս ամենն աշակերտը կարող է ձեռք բերել հենց դպրոցում՝ ՏՀՏ գործիքները կիրառելիս ։4,

ՏՀՏ-ների օգտագործման ժամանակ աշակերտը դասերի ժամանակ դառնում է ակտիվ մասնակից, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես խորհրդատու, խրախուսում է աշակերտի անհատականությունը, ինքնատիպությունը և անկախությունը: Այսպիսով՝ ՏՀՏ կիրառումն ուսուցման գործընթացում թույլ է տալիս.

. Զարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտություններ

. Խթանել միտքը

. Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրազեկություն

. Սովորողին ակտիվորեն ներգրավելու սումնական գործընթացի մեջ

. Ապահովել սովորողի և ուսուցչի միջև ուսումնական գործընթացում համագործակցություն

. Կարևորել նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտություն

Դիտարկման արդյունքում համոզվեցի,որ ՏՀՏ-ի կիրառումը տարրական դպրոցի կրթական գործընթացում նպաստում է տեսական մտածողության զարգացմանը և բարելավում կրթական գործընթացի արդյունավետությունը:

https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=160335

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Այս հետազոտությունը անցկացրել եմ Սյունիքի մարզի Սիսիանի N5 հիմնական դպրոցի 4-րդ դասարանում: Դասապրոցեսի ընթացքում նկատվում է աշակերտների պասսիվություն, ներգրավվածության պակաս ու ցրվածություն: Այս խնդրից բխող իմ խնդիրն էր մոտիվացնել երեխաներին դասապրոցեսին, հետաքրքրություն առաջացնել դասի նկատմամբ: Այդ պատճառով ընտրեցի «ՏՀՏ-ների կիրառումը տարրական դպրոցում » թեման: Պատրաստել ու իրականացրել եմ դասեր ՏՀՏ գործիքներով, որոնց առկայությունն արդեն իսկ ոգևորել ու աշակերտներին ներգրավվել է դասին:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Դասարան՝ 4-րդ

Ուսուցիչ՝ Նաիրա Կիրակոսյան

Առարկա՝ Մայրենի

Դասի թեման՝ Թումանյանի արձանի մոտ

Լեզվական նյութը՝ Անցած լեզվական գիտելիքների ամրապնդում

Դասի նպատակը՝

- Ուղղորդել աշակերտներին՝գտնել համառոտ տեղեկություններ Թումանյանի մասին
- Զարգացնել սահուն, արտահայտիչ կարդալու հմտություն
- Զարգացնել սոցիալական և մշակութային կարողունակություններ

- Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում
- Անցած խոսքի մասերի վերաբերյալ գիտելիքների խորացում և ամրակայում

Վերջնարդյունքները՝ Աշակերտը պետք է կարողանա՝

- Վարժ և արտահայտիչ կարդալ բնագիրը՝պահպանելով գրական արտասանության կանոնները
- Ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը
- Ձևակերպել հարցեր ընթերցածի շուրջ/ՀՊՉՀ2 /
- Բացատրել նորածանոթ բառերը
- Ցուցաբերել հանդուրժողականություն, աջակցել ընկերներին խմբային աշխատանքում /ՀՊՉ Հ25, Հ31, Հ33/

Միջառարկայական կապ՝ երաժշտություն, բնագիտություն, կերպարվեստ

Անհրաժեշտ նյութեր՝ ՏՀՏ միջոցներ, գունավոր մատիտներ, Ա4 չափսի թղթեր, գունավոր, կպչուն թղթեր, դասագիրք, տետր

Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Մշակութային կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Թվային և մեդիակարողունակություն

Խաչվող հասկացություններ՝

- Տարածություն և ժամանակ
- Անհատական և մշակութային արժեհամակարգ

Դասի կառուցվածքը՝ ԽԻԿ համակարգ

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

Դասը սկսել «Մտագրոհ» մեթոդական հնարով։

Նկարագրել Թումանյան գրողին։

Գրատախտակին փակցված պաստառի վրա գրել Թումանյանին բնութագրող բառեր,այնուհետև գունավոր մատիտներով նշել հատկանիշ, գործողություն, հոմանիշ ցույց տվող բառերը։

Մեկնաբանել՝ որ դեպքում կարող են ընդհանրություն ունենալ այս բառերը։

Սահիկաշարով ներկայացնել հեքիաթներից նկարներ

Ո՞ր հեքիաթի հեղինակն է Թումանյանը / աշակերտներ/

Իմաստի ընկալում

Շղթայաձև կարդալ տեքստը։

Ընտրել բանալի բառեր յուրաքանչյուր հատվածի համար, քննարկել, կատարել բառային աշխատանք /դուրս գրել նորածանոթ բառերը և գտնել բացատրությունը /։

Մեկնաբանել յուրաքանչյուր հատվածի միտքը։

Տեքստի մեջ գտնել փոխաբերական իմաստով գործածված բառակապակցությունները, բացատրել։

Տեքստից դուրս գրել բարբառային բառերը և դարձնել գրական

Հետադարձ կապ

- Ի՞նչ սովորեցինք մենք այսօր։
- Ի՞նչն էր ավելի հետաքրքիր։

Տնային առաջադրանք՝

Գտնել հետաքրքիր տեղեկություններ Թումանյանի մասին և ներկայացնել ընկերներին։

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Դասարան՝ 4-րդ

Ուսուցիչ՝ ՆաիրաԿիրակոսյան

Առարկա՝ Մաթեմատիկա

Դասի թեման՝ Տարբեր կարգի գործողություններ պարունակող արտահայտություններ

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման

Դասի նպատակը՝ Բնական թվերի հետ գործողություններ անելու, դրանց հատկությունները կիրառելու հմտությունների զարգացում

Վերջնարդյունքները՝ Հաշվի թվային արտահայտության արժեքը՝կիրառելով թվաբանական գործողությունների օրենքները ,կատարման կարգը։
Կարդա 2-3 գործողություն պարունակող թվային արտահայտությունը հայերեն, գրի 2-3 թվաբանական գործողություն պարունակող հայերեն նախադասությունը թվային արտահայտության տեսքով։

Անհրաժեշտ նյութեր՝ ՏՀՏ միջոցներ,տեսացրիչ, դասագիրք, տետր

Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն

Խաչվող հասկացություններ՝

- Տարածություն և ժամանակ
- օրինաչափություն
- անհատներ և հարաբերություններ

Դասի կառուցվածքը՝ ԽԻԿ համակարգ

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

Կատարել բանավոր հարցում: Գիտելիքների և կարողությունների ստուգման, անցածի ամրապնդման նպատակով իրականացնել ՏՀՏ-ի կիրառմամբ՝ խաղ -հարցաշար: Տեսացրիչի միջոցով ցուցադրել հարցաշարը:Աշակերտներին բաժանել երկու խմբի:Խաղի ավարտից հետո հաշվել յուրաքանչյուր խմբի ճիշտ պատասխանների քանակը և ամփոփել արդյունքը:

https://learningapps.org/view14833538?&fbclid=IwAR2rHoTNw6cgHs9HSidMeMRX8MEnqvfq_ImSw6as1seAS0qVfP1Z04D-trw

Իմաստի ընկալում

Դիտել տեսանյութ թեմայի վերաբերյալ։Երբեմն ընդհատել դիտումը և հարց հղել աշակերտներին։

https://www.youtube.com/watch?v=l8hpoBwNZlg

Կատարել դասարանական աշխատանք՝ սովորածն ամրապնդելու համար։

Կշռադատման փուլ՝ անդրադարձ հարցերով ամփոփել դասը.

1. Մաթեմատիկական ինչ հասկացությունների հետ մենք ծանոթացանք այս դասի ընթացքում։
2. Աշակերտներին հնարավորություն ընձեռնել յուրաքանչյուրը սեփական միտքը արտահայտի
3. Հարց ու պատասխանի միջոցով ամրապնդել թեման

Տնային աշխատանք՝ առաջադրանք 60 բ,63 բ, 66 բ , սովորել կանոնը

Վերջում կատարում եմ գնահատում :

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

Դասարան՝ 4-րդ

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Ուսուցիչ՝ ՆաիրաԿիրակոսյան

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասի տիպը՝ Համակցված

Դասի թեման՝ Ջուրը պետք է մաքուր լինի

Դասի նպատակը՝ Ամրապնդել ջրի կարևորության գաղափարը՝ տարբերելով մաքուր և աղտոտված ջուրը՝ նշելով, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար բույսերի, կենդանիների և մարդկանց համար։

Վերջնարդյունքները՝ Ներկայացնել ջրի կենսական նշանակությունը, ջրի պաշարների սահմանափակությունը, ջրի տնտեսման անհրաժեշտությունը։

Բացատրել, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար կենդանի օրգանիզմների համար:

Հիմնական հասկացություններ՝ ջուր, մաքուր ջուր, աղտոտում , ջրի խնայողություն:

Ցուցադրական նյութեր՝ համակարգիչ , փոքրիկ տեսաֆիլմեր ջրի շրջապտույտի և աղտոտման մասին:

Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- տնտեսական

Խաչվող հասկացություններ՝

- Կայունություն և փոփոխություն
- օրինաչափություն

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

՝

1. Մտագրոհի մեթոդով աշակերտները լրացնեն ջուր հասկացությանը վերաբերող բառերը՝ ջուր, գետ, լիճ, մաքուր, անգույն ,անհամ ու անհոտ ջուր, սառույց , գոլորշի և այլն:

2.Սահմանեն գետ, աղբյուր, լիճ, ջրվեժ հասկացությունները:

3.Լրացնեն Т- աձև աղյուսակ իրենց ծանոթ գետերի և լճերի անվանումներով

Իմաստի ընկալում

Պրոբլեմային հարցի առաջադրում՝ Կարո՞ղ է ջուրը սպառվել:

Աշակերտներն արտահայտեն իրենց կարծիքներն ու դիտեն փոքրիկ տեսաֆիլմ ջրի շրջապտույտի մասին: Տեսանյութը դիտել հետևյալ հղումով՝

https://www.youtube.com/watch?v=yVsridICshI

Համոզվելով, որ ջուրն անսպառ է քանակապես, շեշտադրումը դրվի «ջրի որակական»» սպառում արտահայտության բացատրման վրա: Քննարկմանը մասնակից դարձնել նաև աշակերտներին: Քննարկման հարց դարձնել հետևյալ նախադասությունները՝

1. Ջուրն ինչպե՞ս կարող է աղտոտվել:
2. Ի՞նչ տարբերակներ կառաջարկեք ջուրն աղտոտումից պաշտպանելու համար:

Հնչեցրած կարծիքներից հետո դիտեն տեսանյութ համապատասխան հղումով՝

https://www.youtube.com/watch?v=4hGJ3lDXLbc (Ջրի աղտոտման պատճառները)

Կշռադատման փուլ՝ Անդրադարձ կատարել դասանյութին, լրացնելով հետևյալ հարցաշարը՝ որպես ձևավորող գնահատման գործիք

Ջուրը պետք է մաքուր լինի

1. Ավարտի՛ր միտքը:

Բույսերը, կենդանիները, մարդիկ չեն կարող ապրել առանց ----------:

2. Նշի՛ր հնարավոր ճիշտ ձևակերպումները:

- Մարդիկ պետք է մաքուր պահեն ջուրը:
- Մարդիկ պետք է աղտոտեն ջուրը:
- Ջրերի խնայողության նպատակով պետք է կանխել ջրի անտեղի հոսքը:

3. Ո՞ր նկարներում է ջուրը աղտոտված: Ընդգծի՛ր:



Տնային հանձնարարություն՝

Պատմել դաս 11, էջ 31-33, գրել « Ես արդեն գիտեմ…»

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ ԹԻՎ 1

Դասն անցկացրել եմ 4-րդ դասարանում՝ նախապես պատրաստած պլանի համաձայն: Հաճելի էր տեսնել աշակերտների ոգևորությունն ու անհանգստությունը; Դասը ստացվել էր: Աշակերտներին հետաքրքրեց ՏՀՏ գործիքի կիրառումը դասին: Բոլորը ներգրավված էին դասին:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ ԹԻՎ 2

Դասն անցկացրել եմ 4-րդ դասարանում : Նոր նյութի հաղորդման դաս էր : Դասի թեման էր « Տարբեր կարգի գործողություններ պարունակող արտահայտություններ»:

Դասը վարել եմ համակարգչային դասասենյակում: Աշակերտները ոգևորված էին,ավելի ուշադիր և հետաքրքրված: Դասի նպատակն էր զարգացնել բնական թվերի հետ գործողություններ անելու, դրանց հատկությունները կիրառելու հմտություններ:

Արժևորել ՏՀՏ-ների կիրառումը գիտելիքներ ստանալու և ցանկալի արդյունքի հասնելու համար: Ավելի լավ ընկալելու համար դիտեցինք տեսանյութ:Այս աշխատանքը շատ ոգևորեց աշակերտներին:

Այստեղ խնդիրն այն է ,որ տարրական դասարանների աշակերտները չեն տիրապետում և դժվարանում են աշխատել համակարգչով :

Կատարեցինք միավորային գնահատում՝ խաղի արդյունքների ամփոփման հիման վրա:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ ԹԻՎ 3

Դասն անցկացրել եմ 4-րդ դասարանում : Նոր նյութի հաղորդման դասէր : Դասի թեման էր. «Ջուրը պետք է մաքուր լինի»:

Դասը վարել եմ համակարգչային դասարանում `տեսացրիչի միջոցով: Դասը սկսեցինք անցածը վերհիշելով: Դիտեցինք տեսանյութ ջրի շրջապտույտի վերաբերյալ: Աշակերտները հիացած էին, ավելի ուշադիր և հետաքրքրված: Դասի նպատակն էր ամրապնդել ջրի կարևորության գաղափարը՝ տարբերելով մաքուր և աղտոտված ջուրը՝ նշելով, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար բույսերի, կենդանիների և մարդկանց համար:

Արժևորել ՏՀՏ-ների կիրառումը գիտելիքներ ստանալու և ցանկալի արդյունքի հասնելու համար: Կշռադատման փուլի համար, որպես ձևավորող գնահատման գործիք՝ լրացնում ենք հարցաշար՝ «Ջուրը պետք է մաքուր լինի» վերնագրով:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարող ենք նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն է: ՏՀՏ-ների օգտագործումն ուսումնական գործընթացում կարող է հեշտացնել դասապրոցեսի անցկացումը, բարձրացնել սովորողների հետաքրքրությունն առարկան ուսումնասիրելու, նոր գաղափարները կյանքի կոչելու համար: Այն նպաստում է տրամաբանական մտածողության, մտավոր աշխատանքի, ինքնուրույն աշխատելու հմտությունների ձևավորմանը:

Առաջարկություն

- Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելացնել մի նոր և խիստ կարևոր օղակ՝ համակարգչային ուսուցում:
- Անհրաժեշտ է, որ ուսուցիչը տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:
- ՏՀՏ կիրառմամբ տարրական դպրոցում աշակերտին լայն հնարավորություն տալ հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում» ուսումնական ձեռնարկ /Մ. Աստվածատրյան, Գ. Թերզյան, Ա. Թորոսյան, Հ. Շարխաթունյան /

Էլեկտրոնային նյութեր

- http://zangak.am/pdf/Mank.mitq/2016/Mankavarzhakan-Mitq-2016-3-4.pdf
- https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=160335
- https://www.youtube.com/watch?v=yVsridICshI
- https://www.youtube.com/watch?v=4hGJ3lDXLbc
- https://learningapps.org/view14833538?&fbclid=IwAR2rHoTNw6cgHs9HSidMeMRX8MEnqvfq_ImSw6as1seAS0qVfP1Z04D-trw
- https://www.youtube.com/watch?v=l8hpoBwNZlg

Շնորհակալություն բոլոր դասընթացավարներին համբերատար, գրագետ և արդյունավետ աշխատանքի ու համագործակցության համար